



Ardshinbank

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

29.04.2020թ.

Տպագիր ամփոփագրի պայմանները կարող են փոփոխված լինել: Տպագիր ամփոփագրի պայմանները կայքում հրապարակված գործող պայմաններից փարբերվելու դեպքում անհրաժեշտ է դիմել մասնաճյուղ կամ առաջնորդվել կայքում առկա փարբերակով: Ամբողջական պայմանները՝ <https://www.ardshinbank.am/content/ձեռքբերում/> հղմամբ:

ՀՒՓՈԹԲԱՅԻՆ ՎԱՐԿ - ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԻՑ ԲՆԱԿԵԼԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՎԱՐԿԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Վարկի արժույթ	ՀՀ դրամ		ԱՄՆ դոլար
Վարկի ֆինանսավորման աղբյուր	«Ազգային հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ	Սեփական ռեսուրս	Սեփական ռեսուրս
Հայտի և փաստաթղթերի ընդունման վայր	Բանկի բոլոր մասնաճյուղեր, Գլխամասային գրասենյակ		
Վարկի նպատակ	Կառուցապատման աշխատանքներն ավարտված բնակելի անշարժ գույքի ձեռքբերում		
Ձեռք բերվող գույքի գտնվելու վայր	ՀՀ		
Տոկոսադրույքի տեսակը	Հաստատուն	Հաստատուն (ճշգրտվող) ¹ , Լողացող	Հաստատուն (ճշգրտվող) ¹ , Լողացող
Տարեկան տոկոսադրույք (հաստատուն/հաստատուն (ճշգրտվող))	8.5 - 11.25%, /համաձայն Աղյուսակ 1-ի/	11.25 - 12.95%, /համաձայն Աղյուսակ 1-ի/	9.75 - 10.5%, /համաձայն Աղյուսակ 1-ի/
Տարեկան տոկոսադրույք (լողացող) ²	-	ՀԴ+4.47%	ՀԴ+4.2%
Տարեկան փաստացի տոկոսադրույք	9.46 - 17.52%		9.61 - 16.71%
Առավելագույն ժամկետ	20 տարի		
Նվազագույն ժամկետ	10 տարի		
Վարկի նվազագույն գումար	3 000 000 ՀՀ դրամ		6 000 ԱՄՆ դոլար
Վարկի առավելագույն գումար	60 000 000 ՀՀ դրամ	200 000 000 ՀՀ դրամ	400 000 ԱՄՆ դոլար
Վարկի և տոկոսագումարի մարումներ	Ամենամսյա հավասարաչափ վճարումներ (անուիտետ)		
Վարկի տրամադրման եղանակ	Անկանխիկ՝ Բանկում վարկառուի անվամբ բացված բանկային հաշվին փոխանցման միջոցով		
Նվազագույն կանխավճար	10% ¹	5%	5%
Վարկային հայտի ուսումնասիրության վճար	5 000 ՀՀ դրամ		
	93 000 ՀՀ դրամ՝ մեկ անշարժ գույքի գրավով ապահովված վարկերի դեպքում, գանձվում է մինչև վարկի տրամադրումը		

«Արդշինբանկ» ՓԲԸ
 ՀՀ, 0015, ք. Երևան,
 Գր. Լուսավորչի փող., 13
 Հեռ. (+374-12) 222222
 e-mail: office@ardshinbank.am
 URL: www.ardshinbank.am

Վարկի տրամադրման միանվագ միջնորդավճար	120 000 ՀՀ դրամ՝ երկու անշարժ գույքի գրավով ապահովված վարկերի դեպքում, գանձվում է մինչև վարկի տրամադրումը
Վարկի ամսական սպասարկման վճար	1.վարկի պայմանագրային գումարի 0.05% 2.վարկի պայմանագրային գումարի 0.05% + 2.000 ՀՀ դրամ, եթե իրականացվում է կանխավճարի ապահովագրություն
	<i>Ամսական սպասարկման վճարների չափը վարկի գործողության ամբողջ ընթացքում փոփոխման ենթակա չէ;</i>
Գույքի ձևակերպման համար կատարվող վճարներ	Վարկառու վճարում է՝ 1) գույքի գնահատման, 2) գույքի նկատմամբ սահմանափակումների վերաբերյալ միասնական տեղեկանքի ստացման և 3) գրավի պայմանագրերի նոտարական վավերացման համար, որն ընդհանուր արժեքով կարող է կազմել 40,000 ՀՀ դրամից 105,000 ՀՀ դրամ, ներառյալ լրացուցիչ գույքի գրավադրման դեպքում ծախսերը:
	Բանկը վճարում է՝ 1) Ձեռքբերվող գույքի նկատմամբ վարկառուի սեփականության և 2) Բանկի գրավի իրավունքների կադաստրային պետական գրանցման հետ կապված ծախսերը, բացառությամբ այն դեպքերի, երբ հաճախորդը ցանկանում է գրանցել օրենքով նախատեսված ստանդարտ ժամկետներից արագացված կարգով:
Վաճառողի կողմից վարկի և կանխավճարի հանրագումարի կանխիկացման վճար	չի սահմանվում
Քաղվածքների տրամադրում	Անվճար՝ մինչև 1 ամիս կտրվածքով քաղվածք, Անվճար՝ տարեկան առնվազն չորս անգամ, վարկառուի պահանջով՝ վերջինիս կողմից նշված ժամանակահատվածի համար 1000-5000 ՀՀ դրամ՝ այլ ժամանակահատվածով քաղվածքներ և տեղեկանքներ (տես՝ https://www.ardshinbank.am/content/բանկային-հաշիվ/):
Տույժեր, տուգանքներ	
Վարկառուի կողմից պարտավորությունների չկատարման դեպքում	24% տարեկան՝ ժամկետանց վարկի նկատմամբ
Ժամկետանց տոկոսագումարի դիմաց տույժ	48% տարեկան
Վարկառուին ներկայացվող պահանջներ	
Վարկառուի տարիք	21 տարին լրացած ֆիզիկական անձ, որի տարիքը վարկի մարման վերջնաժամկետին չպետք է գերազանցի 65 տարեկանը
Համավարկառուի տարիք	21 տարին լրացած ֆիզիկական անձ, որի տարիքը վարկի տրամադրման պահին չպետք է գերազանցի 60 տարեկանը: Պահանջը չի կիրառվում, եթե համավարկառուն իր եկամուտներով և պարտավորություններով մասնակցություն չի ունենում վարկի հաստատմանը:
Վարկառուին և համավարկառուին ներկայացվող այլ պահանջներ	Բջջային հեռախոսահամարի և էլեկտրոնային փոստի հասցեի առկայություն

Գրավի առարկային ներկայացվող պահանջներ և պայմաններ

Ֆինանսավորման աղբյուրը	«Ազգային հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ	Սեփական ռեսուրս
Ապահովվածություն	1. Ձեռքբերվող բնակելի անշարժ գույք, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում՝ 2. Հավելյալ բնակելի անշարժ գույք (երկրորդ գրավ) ³	Ձեռքբերվող բնակելի անշարժ գույք
Վարկ/Գրավ առավելագույն հարաբերակցություն	90%	95%

Որոշման կայացման ժամկետներ, գործոններ

Որոշման կայացման ժամկետ	4-7 օր
Որոշման մասին տեղեկացման ժամկետ	1 օր
Տրամադրման ժամկետ	1 աշխատանքային օր՝ գրավի պայմանագիրը նոտարական վավերացում և գրավը կադաստրային գրանցում ստանալուց հետո
Դրական որոշման գործոններ	վարկավորման պայմանների համապատասխանություն և պահանջվող փաստաթղթերի պատշաճ ներկայացում
Վարկի մերժման գործոններ	վարկավորման պայմանների անհամապատասխանություն և պահանջվող փաստաթղթերի բացակայություն

Կարևոր է իմանալ

ՎԱՐԿԱՌՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԺԱՄԿԵՏԻՑ ՇՈՒՏ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ՄԱՍՆԱԿԻ ԿԱՏԱՐԵԼ (ՄԱՐԵԼ) ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՈՒՆԵՑԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՈՐԻ ԴԵՊՔՈՒՄ ՎՃԱՐՎՈՂ ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓՈՎ ԿԵՎԱԶԵՑՎԻ ՎԱՐԿԻ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐԸ, ՀԱՄԱՄԱՍՆՈՐԵՆ ԿԵՎԱԶԵՑՎԻ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՐԵԴԻՏԱՎՈՐՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱԽՍԸ. ՏՎՅԱԼ ԴԵՊՔՈՒՄ ԿՐԵԴԻՏԱՎՈՐՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱԽՍԻՑ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԵՆ ՎԱՐԿԻ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐԻ ՄՆԱՑՈՐԴԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՇՎԵԳՐՎԱԾ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐԸ, ՎԱՐԿԻ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐԻ ՄՆԱՑՈՐԴԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՇՎԵԳՐՎԱԾ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐԸ: ԸՆԴ ՈՐՈՒՄ՝ ՍՈՒՅՆ ԿԵՏՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԻՐ ԻՐԱՎՈՒՆՔՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԲԱՆԿԸ ՉԻ ԿԱՐՈՂ ԿԻՐԱՌԵԼ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ:

Վարկային պայմանագրով ստանձնած իր պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում վարկառուն կարող է գրկվել ձեռք բերվող և գրավադրվող գույքի նկատմամբ իր իրավունքներից:
Գրավի հաշվին վարկային պարտավորությունների ամբողջական չմարման դեպքում պարտավորությունների ամբողջական մարումը կկատարվի վարկառուի և գրավատուների այլ միջոցների և գույքերի հաշվին:

Ժամկետանց պարտավորությունների առկայության դեպքում մարումները կատարվում են հետևյալ հերթականությամբ՝ սահմանված կարգով գրավադրված գույքի բռնագանձման հետ կապված Բանկի կողմից կատարված ծախսերը և վարկային պայմանագրերի շրջանակներում ձևավորված Բանկի նկատմամբ Վարկառուի և/կամ Համավարկառուի այլ դեբիտորական պարտավորությունները, ժամկետանց տոկոսի վրա հաշվարկված (կուտակված) տուժանքի գումար, ժամկետանց Վարկի վրա հաշվարկված (կուտակված) տոկոսագումար, հաշվարկված (կուտակված), սակայն չվճարված ժամկետանց տոկոսագումար, ժամկետանց Վարկի գումարը, վարկի սպասարկման վճարը, Վարկի օգտագործման համար հաշվարկված (կուտակված) ժամկետային տոկոսագումարը, Վարկի գումարը: Դրամական պարտավորությունների կատարման հերթականությունը կարող է փոխվել Բանկի հայեցողությամբ՝ առանց Վարկառուին և/կամ Համավարկառուին տեղեկացնելու:

Գրավի պայմանագրերը պետք է վավերացվեն նոտարական կարգով: Բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքը, հիփոթեքի իրավունքը և այլ գույքային իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Բանկը պարտավորվում է պայմանագրի առաջարկը յոթ օր առաջ տրամադրել հաճախորդին և յոթ օր մտածելու ժամանակ ընձեռել:

Բանկի ՄՈՐԱՅԼ ԲԱՆԿԻՆԳ հավելվածի միջոցով հնարավոր է իրականացնել դրամային փոխանցումներ, կատարել վարկի մարումներ, դիտել հաշիվների մնացորդներն ու գործարքները, կատարել վճարումներ և բազմաթիվ այլ գործարքներ, որոնց կարող եք ծանոթանալ <https://www.ardshinbank.am/content/մորայլ-բանկինգ> հղմամբ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝

Վարկի տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Իսկ տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարժենա վարկը ձեզ համար տոկոսագումարները և այլ վճարները սահմանված ժամկետներում և չափերով կատարելու դեպքում: Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման կարգը կարող եք գտնել Բանկի պաշտոնական www.ardshinbank.am կայքէջում:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝

Արտարժույթով տրամադրված վարկերի դեպքում արտարժույթի փոխարժեքի փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ վարկի մարումների չափի վրա:

Արտարժույթով տրամադրված վարկերի դեպքում տարեկան փաստացի տոկոսադրույքը կարող է փոփոխվել կախված ՀՀ Կենտրոնական բանկի պաշտոնական կայքէջում հրապարակված փոխարժեքի մեծության փոփոխությունից:

Արտարժույթով տրամադրվող վարկի դեպքում փաստացի տոկոսադրույքի հաշվարկման համար հիմք է ընդունվել 1 ԱՄՆ դոլարը = է 479.28 ՀՀ դրամ փոխարժեքը, որը հրապարակվել է 04/05/2020թ.-ին ՀՀ ԿԲ www.cba.am պաշտոնական կայքէջում:

¹ Բանկի ռեսուրսով տրամադրվող վարկերի տոկոսադրույքները վերանայվում են՝ սկսած վարկային պայմանագրի գործողության 37-րդ ամսից՝ **Հաշվարկային դրույքի (ՀԴ) փոփոխման դեպքում:** Վարկային պայմանագրի գործողության ընթացքում վարկի տոկոսադրույքը վարկի տրամադրման ժամանակ սահմանված տոկոսադրույքի համեմատ չի կարող բարձրանալ կամ իջնել ավելի քան 6 տոկոսային կետով:

² Լողացող տոկոսադրույքով տրամադրվող վարկի **Հաշվարկային դրույքի (ՀԴ) արժեքը** հավասար է վարկի տրամադրման վերաբերյալ որոշման կայացման պահին Բանկում գործող ՀԴ արժեքին:

Հաշվարկային դրույքը հարապարակվում է Բանկի www.ardshinbank.am կայքում, Բանկի կողմից վերանայվում է յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ին և օգոստոսի 1-ին: Կնքված պայմանագրերի գծով տոկոսադրույքները վերանայվում են ՀԴ փոփոխությունից մեկ ամիս հետո (եթե ծանուցման մեջ ավելի երկար ամսաթիվ սահմանված չէ)՝ հաշվարկային դրույքի փոփոխված լինելու դեպքում: Տոկոսադրույքները փոփոխվում՝ բարձրացվում կամ նվազեցվում են ՀԴ փոփոխության չափով:

Վարկային պայմանագրի գործողության ընթացքում վարկի տոկոսադրույքը վարկի տրամադրման ժամանակ սահմանված տոկոսադրույքի համեմատ չի կարող բարձրանալ կամ իջնել ավելի քան 6 տոկոսային կետով:

Բանկի **Հաշվարկային դրույքի (ՀԴ) սահմանման աղյուսակ**

	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար
Գործող	6%	4.5%
29.04.2020թ.-03.08.2020թ.	6.13%	4.5%

³ Եթե Բանկի հետ համագործակցող համապատասխան ընկերության կողմից տրված ձեռքբերված գույքի գնահատման արդյունքում վարկ/գրավ հարաբերակցությունը բավարարում է Բանկի պահանջին, ապա Վարկառուի/համավարկառուի դիմումի համաձայն երկրորդ գրավը կարող է ազատվել արգելանքից՝ ժամկետանց պարտավորություններ չունենալու դեպքում:

Երկրորդային շուկայից ձեռքբերման դեպքում տարեկան տոկոսադրույքի սահմանման մեխանիզմ

Ֆինանսավորման աղբյուր		«Ազգային հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ					
Կանխավճարի չափ¹	Վարկի գումար և արժույթ	մինչև 35 մլն (ներառյալ) ՀՀ դրամ			35-60 մլն ՀՀ դրամ		
	վարկի ենթատեսակ²	Էներգոարդյունավետ կամ մարզային վարկ		Այլ վարկ	-		
50% և ավելի		8.5%		10.0%	11.0%		
10%-49.99%¹		8.75%		10.25%	11.25%		
Ֆինանսավորման աղբյուր		Սեփական ռեսուրս					
Վարկի արժույթ		ՀՀ դրամ			ԱՄՆ դոլար		
Տոկոսադրույքի տեսակ		Հաստատուն		Լողացող	Հաստատուն		Լողացող
Կանխավճարի չափ¹	Վարկի ժամկետ	120-239 ամիս	240 ամիս	120-240 ամիս	36-180 ամիս	181-240 ամիս	36-240 ամիս
50% և ավելի		11.25%	12.45%	ՀԴ+4.47%	9.75%	10.00%	ՀԴ+4.2%
30%-49.99%		11.50%	12.70%		10.00%	10.25%	
5%-29.99%		11.75%	12.95%		10.25%	10.50%	

¹ Սույն աղյուսակի իմաստով վճարված կանխավճարը հաշվարկվում է հետևյալ կերպ՝ (100%-վարկ/գրավ հարաբերակցություն%)

10-ից 29.99% կանխավճարը ընդունելի է, եթե՝
 1) գրավադրվում է լրացուցիչ գույք կամ
 2) իրականացվում է հիփոթեքային պարտավորության ապահովագրություն՝ ձեռք բերվող գույքի արժեքի 30%-ի և կատարվող կանխավճարի տարբերության չափով:

²Մարզային վարկ է համարվում ՀՀ ամբողջ տարածքում, բացառությամբ Երևան քաղաքի, գույքի ձեռք բերման համար տրամադրվող վարկը, որի գումարը չի գերազանցում 35 մլն ՀՀ դրամը:
 Էներգաարդյունավետ վարկ է համարվում սահմանված էներգաարդյունավետության չափանիշներին բավարարող բնակարանի/բնակելի տան ձեռքբերման նպատակով տրամադրվող վարկը, որի գումարը չի գերազանցում 35մլն ՀՀ դրամը:

Գրավադրվող անշարժ գույքի գնահատումն իրականացվում է բացառապես Բանկի հետ համագործակցող անկախ ընկերությունների կողմից: Սլորոն գնահատող կազմակերպությունների ցանկը

Կազմակերպություն	Հասցե / կայքէջ	Հեռախոսահամար	Էլ. հասցե / հաշվեհամար
------------------	----------------	---------------	------------------------

«Ալտա Վիպ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Պարոնյան 16 թիվ 2, www.altavip.am	010530709, 010500407	info@altavip.am h/h 2470100270080000
«Օրրան» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Արշակունյաց 2ա, www.orravn.am	010520452, 098204898, 091750809	orravn@mail.ru h/h 2470103446760000
«Օֆման Մորգիդջ Քոնսալթինգ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Եզ. Կողբացի 42-37,	010537179, 099537174, 077708057	ofmanmc@mail.ru h/h 2474401231870000
«Վի ԷՄ-ԱՐ ՓԻ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Վարդանանց, փակուղի 8, 209 սենյակ,	010588797, 043588797	vm-rp@mail.ru h/h 2470103730630000
«ՕԼԻՎԵՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Թումանյան 82 224 ս.	094542770, 091542770, 010542770	info@olivergroup.am h/h 2470067284370000
«Ֆինլոու» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 50-3 տ.	010506000, 091911155, 060747400	finlaw@inbox.ru h/h 2474602078940000
«Ինէքս» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Նար-Դոսի 28; ք. Վանաձոր, Թամանցիների 14	041/096-04 22 87, 077-51 81 16	apresyan.expert@mail.ru h/h 247170789348000

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝

Ձեր ԳՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՈՆԱԳԱՆՁՎԵԼ, ԵԹԵ ԴՈՒՔ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵՔ ՁԵՐ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ:

Ձեր ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՎԱՐԿԱՏՈՒՆ 3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐ ՀԵՏՈ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՆՔ ԲԵՐԵԼ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ:

ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՁԵՁ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ:

ՀՀ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ ԵՆ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ:

«Արդշինբանկ» ՓԲԸ
 ՀՀ, 0015, ք. Երևան,
 Գր. Լոսավորչի փող., 13
 Հեռ. (+374-12) 222222
 e-mail: office@ardshinbank.am
 URL: www.ardshinbank.am